ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կարեն Բրուտյանի՝ հունիսի 13-17-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը՝

Կարեն Բրուտյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2017թ. հունիսի 13-17-ը,

4. Հրավիրող կողմը՝

Միջազգային հարկային կոմպակտ (ITC) և Ադդիս հարկային նախաձեռնություն (ATI)

5. Գործուղման նպատակը՝

Միջազգային հարկային կոմպակտը (ITC) նախաձեռնություն է, որը խրախուսում է անցումային շրջանում գտնվող և զարգացող այն երկրներին, որոնք նպատակ ունեն մոբիլիզացնել ներքին ռեսուրսների հավաքագրումը: ITC-ի նպատակն է խրախուսել արդյունավետ և պակաս ծախսատար հարկային համակարգերը և համերկրային մակարդակում պայքարել հարկերից խուսափումների և ոչ բարեխիղճ հարկային գործելաոճի դեմ: ITC-ն ոչ պաշտոնական և գործնական հարթակ է, որը մեկտեղ է բերում զարգացման գործընկերների, մասնավորապես՝ քաղաքականություն մշակողների, փորձագետների, ակադեմիական հանրության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, որոնք աշխատում են զարգացման և հարկային ոլորտներում: Նրանց ուժերը, ինչպես նաև հասանելի կարողություններն ու ռեսուրսները համակարգելով՝ ITC-ն արժեք է ավելացնում հարկային և զարգացման նախաձեռնություններին՝ առանց կրկնօրինակելու առկա կառուցվածքները և ջանքերը:

6. Քննարկված թեմաները՝

Կոնֆերանսի ընթացքում քննարկվեց Ադդիս հարկային նախաձեռնության (ATI) 3 նպատակների զարգացումները՝

1. կրկնապատկել գործընկեր երկրներում ներքին ռեսուրսների մոբիլիզացմանն ուղղված աջակցությունը,
2. ընդլայնել ներքին ռեսուրսների մոբիլիզացումը,
3. երաշխավորել զարգացմանը միտված քաղաքականություն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կոնֆերանսի ժամանակ գործնական շփումներ և հանդիպումներ եղան միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և այլ երկրներից գործընկերների հետ, քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Կոնֆերանսը հնարավորություն տվեց ծանոթանալ զարգացող երկրներում հարկային բարեփոխումների ընթացքին, ռիսկերին, ինչպես նաև ճշգրտել հավանական աջակցության շրջանակը: Կոնֆերանսին մասնակցությանն աջակցել էր Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության Հանրային ֆինանսների կառավարում Հարավային Կովկասում ծրագիրը: Վերջինիս հետ ակնկալվում է շարունակական համագործակցություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

1. մասնակից դառնալ ITC-ին,
2. աշխատանքներ տանել ներքին ռեսուրսների մոբիլիզացման առումով տեխնիկական և հնարավոր այլ աջակցության ապահովման համար: